

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 31-ԻՆ ԺԱՄԸ
15:30-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ ՏԵՍՉԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

**քաղ. Երևան
Մասնակցում էին՝**

Խորհրդի անդամներ՝

Տ. Դավթյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարար
Ա. Հարությունյան	ՀՀ բնապահպանության նախարար
Դ. Դումանյան	ՀՀ առողջապահության նախարար
Ս. Թադևոսյան	ՀՀ քաղաքաշինության նախարար
Ա. Ասատրյան	ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարար
Ա. Մովսիսյան	ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար
Վ. Գաբրիելյան	ՀՀ ֆինանսների նախարար
Հ. Թովմասյան	ՀՀ արդարադատության նախարար
Ն. Երիցյան	ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ
Մ. Հակոբյան	Սպառողների ազգային ասոցիացիայի նախագահ
Լ. Յագոբյան	«Սպառողների իրավունքների պաշտպանություն» ՀԿ-ի նախագահ
Վ. Կարապետյան	«ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Մասնակիցներ՝

Դ. Սարգսյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար
Գ. Բաղիյան	ՀՀ գյուղատնտեսության նախարարի առաջին տեղակալ
Կ. Մինասյան	ՀՀ Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ
Վ. Տերտերյան	ՀՀ տարածքային կառավարման նախարարի առաջին տեղակալ

Ա. Ավետիսյան	ՀՀ տրանսպորտի և կապի նախարարի տեղակալ
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Հ. Մխիթարյան	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարի տեղակալ
Կ. Արեյան	Երևանի քաղաքապետի տեղակալ
Ս. Վասիլյան	ՀՀ քաղաքացիական ծառայության խորհրդի նախագահի տեղակալ
Վ. Միրումյան	ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի տեղակալ
Ա. Բախչազույան	ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ
Լ. Հունանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետ
Ս. Տոնոյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետի պաշտոնակատար
Ռ. Վարդանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական վարչության պետի տեղակալ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության առաջատար մասնագետի պաշտոնակատար
Գ. Պողոսյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի ղեկավար
Հ. Քաղկեցյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Վ. Դաբադյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Հ. Այվազյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Հ. Հակոբյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի տեսչական բարեփոխումների խմբի անդամ
Ս. Հայրապետյան	ՀՀ էկոնոմիկայի նախարարության աշխատակազմի մամուլի քարտուղար

Ա. Նազարյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի ներկայացուցիչ
Ա. Գոմկցյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Գ. Հարությունյան	ՄՖԿ-ի երևանյան գրասենյակի փորձագետ
Ս. Ծատուրյան	ՎՋԵԲ-ի գրասենյակի փորձագետ

1. «Ներմուծվող սննդամթերքի վերահսկողության մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» և «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերին հավանություն տալու վերաբերյալ

(Վ. Դաբաղյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1. Հավանություն տալ «Ներմուծվող սննդամթերքի վերահսկողության մեթոդաբանությունը և ռիսկայնությունը որոշող չափանիշների ընդհանուր նկարագիրը հաստատելու մասին» և «Սննդամթերքի անվտանգության պետական ծառայության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումների նախագծերին՝ հաշվի առնելով նիստում արված դիտողություններն ու առաջարկությունները.

2. Հանձնարարել ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայության պետ Ա. Բախչագույանին՝ ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ. Դավթյանի հետ համատեղ.

1) լրամշակել որոշումների նախագծերը՝ հաշվի առնելով ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի, ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի առաջարկությունները.

2) վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

2. «Բնապահպանության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ

(Վ. Դաբաղյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հավանություն տալ ներկայացված՝ Բնապահպանության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությանը.

2) հանձնարարել ՀՀ բնապահպանության նախարար Ա. Հարությունյանին՝

ա. «Բնապահպանության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը ներկայացնել ՀՀ կառավարության նիստի քննարկմանը,

բ. հետագայում՝ Բնապահպանության պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության կատարելագործման ժամանակ հաշվի առնել ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյանի, ՀՀ արդարադատության նախարար Հ. Թովմասյանի և Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանի առաջարկությունները:

3. «Ընդերքի պետական տեսչության ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագծին հավանություն տալու վերաբերյալ

(Վ. Դաբաղյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ.Դավթյանին՝ Երևանի քաղաքապետի տեղակալ Կ. Արեյանի՝ մետաղական և ոչ մետաղական հանքավայրերի արդյունահանման ոլորտները և ստուգման առարկաների հստակեցման վերաբերյալ առաջարկությունը դարձնել քննարկման առարկա և արդյունքները ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

2) հանձնարարել ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարար Ա.Մովսիսյանին՝

ա. ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը և ըստ այդմ տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի քարտուղարության հետ համատեղ ևս մեկ

անգամ քննարկել ուսումնասիրվող հանքավայրերի ստուգման խնդիրը և անհրաժեշտության դեպքում լրամշակել ՀՀ կառավարության որոշման նախագիծը,

բ. վերջնական լրամշակված տարբերակը ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ:

4. «Շուկայի վերահսկողության մասին» և «Ոչ պարենային արտադրանքի ընդհանուր անվտանգության մասին» ՀՀ օրենքների նախագծերին հավանություն տալու վերաբերյալ

(Գ. Պողոսյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ էկոնոմիկայի նախարար Տ.Դավթյանին՝

1) ՀՀ ֆինանսների նախարար Վ. Գաբրիելյանի առաջարկությանը համապատասխան՝ վերանայել օրենքով նախատեսված դրույթները՝ առավել խստացնելով հրապարակայնությանը ներկայացվող պահանջները.

2) ՀՀ օրենքների նախագծերի վերջնական լրամշակված տարբերակները սահմանված կարգով ներկայացնել ՀՀ կառավարության աշխատակազմ.

3) ԵՄ-ի գրավոր համաձայնությունն ստանալուն պես ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել համապատասխան տեղեկատվություն:

5. Հրդեհային և տեխնիկական անվտանգության պետական տեսչության ստուգաթերթերի փորձարկման արդյունքների վերաբերյալ

(Լ. Քաղկեցյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարար Ա. Երիցյանին՝

1) տեսչական բարեփոխումների համակարգման խորհրդի քարտուղարության հետ համատեղ մեկամսյա ժամկետում վերանայել և ըստ կարևորության առնվազն 50 տոկոսով կրճատել հրդեհային և տեխնիկական անվտանգության պետական տեսչության ստուգաթերթում ներառված հարցերն ու ներկայացնել վերջնական տարբերակ.

2) հորեհային և տեխնիկական անվտանգության պետական տեսչության ստուգաթերթի վերանայման գործընթացում, անհրաժեշտության դեպքում, ներգրավել նաև գործարար համայնքի համապատասխան ներկայացուցիչներին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ



ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ